ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ք.Երևան **«20» նոյեմբեր 2023թ.**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ ՀԱՊՀ-2023/9

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ

Մասնակից՝ «Դոնեռ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-23/25

Առարկան՝ Կենցաղային տեխնիկա

Գործի նախապատմություն

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կենցաղային տեխնիկայի գնման նպատակով 2023 թվականի հոկտեմբերի 16-ին հայտարարվել է «ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-23/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Ընթացակարգին հայտ է ներկայացրել «Դոնեռ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից): Մասնակցի հայտում առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

- հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը ստորագրված չէ:
- հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում սխալ է լրացված մասնակցության չափաբաժինները
- հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում սխալ է լրացված Պատվիրատուի անունը
- հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում սխալ է լրացված ընթացակարգի ծածկագիրը
- 6-րդ չափաբաժնի համար լրացված չեն առաջարկվող ապրանքի «Մոդել», «Ապրանքային նշան», «Ֆիրմային անվանում», «Արտադրող» և «Տեխնիկական բնութագիր» դաշտերը (Մասնակցի հայտը կցվում է)

«Դոնեռ» ՍՊԸ-ն 6-րդ չափաբաժնի գծով հանդիսացել է նվազագույն գնային առաջարկ ներակայացրած Մասնակից: Մասնակցին տրամադրվել է մեկ աշխատանքային օր արձանագրված թերությունները շտկելու համար: Շտկման համար նախատեսված ժամանակի ավարտից հետո, արձանագրվել է, որ մասնակիցը շտկում չի իրականացրել:

Մասնակցի հայտը 6-րդ չափաբաժնի գծով մերժվել է և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում 2023թվականի նոյեմբերի 10-ին:

Եզրակացություն և եզրահանգում

Համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետի

«Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ....., ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները»:

Սույն ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են ներքոնշյալ անհամապատասխանությունները .

- հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը ստորագրված չէ:
- հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում սխալ է լրացված մասնակցության չափաբաժինները
- հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում սխալ է լրացված Պատվիրատուի անունը
- հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում սխալ է լրացված ընթացակարգի ծածկագիրը
- 6-րդ չափաբաժնի համար լրացված չեն առաջարկվող ապրանքի «Մոդել», «Ապրանքային նշան», «Ֆիրմային անվանում», «Արտադրող» և «Տեխնիկական բնութագիր» դաշտերը

Համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 42-րդ կետի

Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: **Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...**

2023 թվականի նոյեմբերի 6-ին Մասնակցին տրամադրվել է մեկ աշխատանքային օր շտկում իրականացնելու համար, որի ընթացքում շտկում չի իրականացվել (արձանագրության հրապարակման արտատպումը կցվում է):

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության «... գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը **կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը** ...»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6) ենթակետի «ա» պարբերությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լիազոր մարմնին ներկայացնել «Դոնեռ» ՍՊ ընկերությունը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով ընդգրկելու համար:

ՌԵԿՏՈՐ **Գ.Պ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**